ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/13

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդարանը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.02.2018թ. թիվ 03/26-3/1764-18 գրությամբ Ֆ/Ա Արմեն Միտոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/335 գրության հիման վրա, 02.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ֆ/Ա Արմեն Միտոյանին (այսուհետ՝ նաև Ֆ/Ա) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/335 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Արմեն Միտոյանի միջև 26.10.2017թ. կնքված N ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 ծածկագրով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 23-ից միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ Արմավիրի տարածաշրջան հոկտեմբեր՝ 65120կգ, նոյեմբեր՝ 118500կգ, Արարատի տարածաշրջան հոկտեմբեր՝ 21180կգ, նոյեմբեր՝ 46500կգ, Երևանի տարածաշրջան նոյեմբեր՝ 180250կգ կարտոֆիլ մասով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2018թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. **<u>Ֆ/Ա Արմեն Միտոյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է Ֆ/Ա Արմեն Միտոյանին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.02.2018թ. թիվ 03/26-3/1764-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ֆ/Ա Արմեն Միտոյանը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ներկայացել:

4. **<u>ՍՑ-ԷՍ-2018/13 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 02.02.2018թ. թիվ 03/26-3/1764-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 31.01.2018թ. թիվ ԴՎԱ/335 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Արմեն Միտոյանի միջև 26.10.2017թ. կնքված N ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին 19.01.2018թ. ուղղված զեկուցագիրը, Ֆ/Ա Արմեն Միտոյանին ուղղված 24.01.2018թ. թիվ ԴՎԱ/259 գրությունը, ՀՀ ԶՈՒ զորամասերի 2017-2018թթ. կարտոֆիլի թերի մատակարարումների, ըստ մատակարարների և տարածաշրջանների վերաբերյալ 28.12.2017թ. դրությամբ տեղեկանքը.

ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Արմեն Միտոյանի միջև 26.10.2017թ. կնքվել է N ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակակարել պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:
- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
- 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:
- 2.3.4 կետի համաձայն՝ Վաճառողն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
- 2.3.4.1 կետի համաձայն՝ Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրով նախատեսվածի գնման ժամանակացույցի համաձայն՝ Ֆ/Ա Արմեն Միտոյանը պարտավորվել է 2017թ. հոկտեմբեր ամսին Արմավիրի տարածաշրջան մատակարարել

կարտոֆիլ՝ 118500կգ, նոյեմբեր ամսին՝ 118500կգ, Արարատի տարածաշրջան՝ հոկտեմբեր ամսին՝ 46500կգ, նոյեմբեր ամսին՝ 46500կգ և Երևանի տարածաշրջան նոյեմբեր ամսին՝ 180250կգ:

ՀՀ ԶՈՒ զորամասերի 2017-2018թթ. կարտոֆիլի թերի մատակարարումների, ըստ մատակարարների և տարածաշրջանների վերաբերյալ 28.12.2017թ. դրությամբ կազմված տեղեկանքի համաձայն՝ Ֆ/Ա Արմեն Միտոյանի կողմից Արմավիրի տարածաշրջան հոկտեմբեր ամսում թերի է մատակարարվել՝ 65120կգ, նոյեմբեր ամսում՝ 118500կգ, Արարատի տարածաշրջան՝ հոկտեմբեր ամսում՝ 21180կգ, նոյեմբեր ամսում՝ 46500կգ և Երևանի տարածաշրջան՝ նոյեմբեր ամսին՝ 180250կգ կարտոֆիլ:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին ներկայացված զեկուցագրով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունից ստացված առ 28.12.2017թ. 514/3854 գրության վերաբերյալ Ձեր հանձնարարկանի՝ Ֆ/Ա Արմեն Միտոյանի հետ կնքված, համապատասխանաբար ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 պայմանագրի միակողմանի լուծման նպատակով, Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության կողմից տրամադրված՝ տույժերի ու տուգանքների գումարների վերաբերյալ առ 16.01.2018թ. մուտք գրությունը:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչությանը, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ. ենթակետի պահանջները, միակողմանի՝ օրենքից բխող բոլոր հետևանքներով մասնակի լուծել ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 պայմանագիրը չմատակարարված ներքոհիշյալ խմբաքանակների մասով.

- Արմավիրի տարածաշրջան հոկտեմբեր՝ 65120կգ, նոյեմբեր՝ 118500կգ,
- Արարատի տարածաշրջան հոկտեմբեր՝ 21180կգ, նոյեմբեր՝ 46500կգ,
- Երևանի տարածաշրջան նոյեմբեր՝ 180250կգ»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 24.01.2018թ. թիվ ԴՎԱ/259 գրությամբ Ֆ/Ա Արմեն Միտոյանին հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Արմեն Միտոյանի միջև 26.10.2017թ. կնքված ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 2017թ. հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում մատակարարել բանջարեղեն (կարտոֆիլ):

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 բ. ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. հունվարի 23-ին միակողմանի մասնակի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ Արմավիրի տարածաշրջան հոկտեմբեր՝ 65120կգ, նոյեմբեր՝ 118500կգ, Արարատի տարածաշրջան հոկտեմբեր՝ 21180կգ, նոյեմբեր՝ 46500կգ, Երևանի տարածաշրջան նոյեմբեր՝ 180250կգ (Կարտոֆիլ) մասով:

Տեղեկացնում եմ, որ Ֆ/Ա Արմեն Միտոյանը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 565.621 (հինգ հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 6.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Ֆ/Ա Արմեն Միտոյանից կգանձվի նաև պայմանագրի կատարման ապահովման գումար՝ որպես պայմանագրի կատարման ապահովում (կնքված պայմանագրի ընդհանուր գումարի 10%)՝ 3.934.028 (երեք միլիոն ինը հարյուր երեսունչորս հազար քսանութ) ՀՀ դրամ՝ փոխանցելով՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին:»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Խորհուրդն արձանագրում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և Ֆ/Ա Արմեն Միտոյանի միջև 26.10.2017թ. կնքվել է N ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված ապրանքը Ֆ/Ա Արմեն Միտոյանի կողմից Պայմանագրով նախատեսված քանակով և ժամկետում չի մատակարարվել:

Խորհուրդը գտնում է, որ Ֆ/Ա Արմեն Միտոյանը պայմանագրով նախատեսված ապրանքը Պայմանագրով նախատեսված քանակով և ժամկետում չմատակարարելով՝ խախտել է 26.10.2017թ. կնքված N ՀԲՄԱՊՁԲ-7/5-6 գնման պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ֆ/Ա Արմեն Միտոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.02.2018թ. Ֆ/Ա Արմեն Միտոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. Ֆ/Ա Արմեն Միտոյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման

խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**